10.57192/18291864-2024.1-219

Աննա Ջ. Տոմեյան

ԿՈՐԵԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ազգային ինքնության ձևակերպման ճանապարհին*

Բանալի բառեր – Հարավային Կորեա, Հյուսիսային Կորեա, Կորեայի վերամիավորում, ազգային ինքնություն, Ջուչեի գաղափարախոսություն, մշակութային ժառանգություն, կոնֆուցիական արժեքներ, կրթական համակարգ, կորեական դպրոցական և բուհական համակարգ, կրթական անհամամասնություններ, հավաքական ինքնություն, միջմշակութային հեռանկարներ:

Մուտք

Հարավային և Հյուսիսային Կորեան ունեն ընդհանուր ինքնութենական և մշակութային ժառանգություն, որն արմատավորված է կորեացիների միասնական պատմության մեջ, որտեղ նրանք հանդես են գալիս որպես միասնական ազգ: Չնայած 20-րդ դարի կեսերին տեղի ունեցած տարանջատմանը, այս ընդհանուր ժառանգությունը պահպանվում է որպես Հարավային և Հյուսիսային Կորեաների միջև խորը պատմական ու մշակութային կապի վկայություն:

Կորեական ընդհանուր ժառանգության մեջ առանցքային նշանակություն ունեն լեզուն, որը ծառայում է որպես միավորող գործոն, պատմությունը՝ սկսած կորեական առաջին թագավորությունների առաջացումից մինչև ճապոնական գաղութատիրության շրջան և ժամանակակից իրադարձություններ: Պատմությունը, պատմական նշանավոր դեմքերը, ինչպիսիք են Սե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.03.2024: Հոդվածում կորեական կրթական համակարգը չի դիտարկվում զուտ մանկավարժական դիտանկյունից: Նրանում կարևոր է նաև հասարակության ինքնակայացման հոլովույթն իր բևեռային երկու հարացույցերով:

ջոն Մեծ թագավորն ու ծովակալ Լի Սուն Սինը, նպաստում են հավաքական մշակութային հիշողությանը[1]:

Ավելին, երկու Կորեաներին միավորում են մշակութային անհամար ավանդույթները, ավանդական հագուստը (հանբոկ), երգն ու երաժշտությունը, պարը, խոհանոցը, գրականությունն ու բանահյուսությունը: Գրական և բանահյուսական ժառանգությունը, ներառյալ դասական վեպերն ու լեգենդները, օրինակ՝ «Չունհյանի հեքիաթը»[2], Տանգունի առասպելը[3], պահպանվել ու փոխանցվել են սերունդներին:

Երկու Կորեաների միջև, իհարկե, եղել են նաև մշակութային փոխանակումներ՝ համատեղ մարզական միջոցառումներ, գեղարվեստական ներկայացումներ, այդ թվում նաև՝ երկրի բաժանման հետևանքով բաժանված

---

1 **Սեջոն Մեծ** (세종대왕 [Sejong Daewang], 1397–1450 թթ.) – թագավորել է 1418–1450 թթ., Չոսոն դինաստիայի 4-րդ միապետը: Նա հայտնի է բազմաթիվ ձեռքբերումներով, այդ թվում՝ 1443 թ. կորեական գրի՝ Հանգըլի ստեղծմամբ: Թեև 1446 թ. Սեջոնի հրամանով նոր այբուբենը դարձավ երկրի պաշտոնական գրային համակարգը, սակայն, մինչև 1945 թ. կոնֆուցիականության և չինական մշակույթի ազդեցության պատճառով, կորեական նոր գրերի օգտագործումը հատկապես սահմանափակ էր գիտնականների և կորեական հասարակության վերին շերտերին պատկանող ներկայացուցիչների շրջանում: Սեջոն թագավորն առաջնահերթ է համարել մշակութային և գիտական առաջընթացը: Նրա կառավարման շրջանը համարվում է որպես ոսկե դարաշրջան:

Լի Սուն Սին (이순신, 1545–1598 թթ.) – ականավոր ռազմածովային հրամատար, ով չի ունեցել ոչ մի պարտություն: Նա առանցքային դեր է խաղացել Կորեայի պաշտպանության գործում ճապոնական արշավանքներից, մասնավորապես՝ Իմջինի պատերազմի (1592–1598 թթ.) ժամանակ: (Ավելի մանրամասն տե՛ս **Choe-Wall Y. H., Pettid M. J. et al**, Encyclopaedia of Korea, Australian National University, 1999, էջ 1150–1153, 1418–1419):

2 Ենթադրաբար, **«Չունհյանի հեքիաթը»** ստեղծվել է Յոնջո կամ Կվանսուկ վանի գահակալման տարիներին (영조 [Yeongjo] կամ 광숙 [Gwangsuk], 1724–1776 թթ.): Այն նշանակալից տեղ է զբաղեցնում կորեական գրականության մեջ՝ ցուցադրելով մշակութային արժեքներ և ուսումնասիրելով սիրո, հավատարմության և սոցիալական արդարության թեմաները (Հեքիաթը տե՛ս 춘향전 (고전소설), 서울, 유페이퍼, 2015 (Չունհյան (Դասական վեպ), Սեուլ, U-Paper, 2015):

3 **Տանգունը** (단군-Dangun) կորեական դիցաբանության լեգենդար կերպարներից է և առաջին կորեական թագավորության՝ Կոչոսոնի հիմնադիրը: Ըստ առասպելական պատմվածքի՝ Տանգունը եղել է Հվանունի (환웅 [Hwanung], Երկնքի տիրակալ Հվանինի որդին) և կին-արջի (웅녀 -Ungnyeo) սերունդը: Տանգունին վերագրվում է Կոչոսոնի հիմնադրումը մ.թ.ա. 2333 թվականին, որը նշանավորեց կորեական քաղաքակրթության սկիզբը: Տանգունի առասպելը կորեական մշակութային ինքնության հիմքերից է և արտացոլում է կորեացի ժողովրդի վաղ ծագումն ու առասպելական արմատները (Տե՛ս 단군, 우리 민족의 시조 (Տանգուն, Մեր ժողովրդի նախահայրը), http://contents.history.go.kr/mobile/kc/view.do?levelId=kc_n100800&code=kc_age_10 (մուտք՝ 05.12.2023)):

ընտանիքների վերամիավորում[4]: Այս փոխանակումները նպաստում են ավելի լայն հեռանկարների ձևավորմանը՝ թույլ տալով գնահատել մշակութային միասնությունը:

Նույնն են հասարակության հարաբերությունները կարգավորող նորմերը: Ե՛վ Հարավային Կորեայում, և՛ Հյուսիսային Կորեայում խորապես արմատավորված են կոնֆուցիական արժեքները՝ որդիական բարեպաշտության նախնիների և մեծերի նկատմամբ հարգանքի շեշտադրմամբ: Կոնֆուցիականության հիմնարար դրույթները ձևավորում են էթիկական չափանիշները, դաստիարակության և կրթական իդեալները:

Չնայած մշակութային ընդհանրություններին, տասնամյակների ընթացքում ազգի երկու հատվածներում քաղաքական ու գաղափարական տարբերությունները հանգեցրին տարբեր ինքնությունների մշակմանը, ինչպես նաև՝ յուրահատուկ սոցիալական, տնտեսական, քաղաքական ու կրթական համակարգերի ստեղծմանը:

Այսպիսով, այս համատեքստում կարևոր է մեկ ինքնության ստեղծման և վերամիավորման հարցում կրթական համակարգի դերը: Հենց կրթության միջոցով են փոխանցվում մշակութային արժեքները, որոնք կարող են ներառել արդարություն, հավասարություն, հանդուրժողականություն, անհատականություն կամ կոլեկտիվիզմ հասկացությունները, որոնք նպաստում են ընդհանուր ինքնության զարգացմանը:

Այժմ, ունենալով ինքնության տարբեր ընկալումներ ու գաղափարաբանություն, Հարավային և Հյուսիսային Կորեայում ազգային մշակույթն ու պատմությունն ուսուցանվում են տարբեր կերպ: Սակայն ընդհանուր ինքնութենական ու մշակութային ժառանգությունը շարունակում է մնալ ազգի ընդհանուր պատմության և վերամիավորման ձգտումների խորհրդանիշը: Եվ, ենթադրաբար, կորեական ազգի վերամիավորման ուղիները կարող են վեր

4 Նշանավոր օրինակներ են 2000 և 2004 թթ. ամառային օլիմպիական խաղերը, որոնց բացման արարողությանը Հարավն ու Հյուսիսը հանդես եկան միասնական երթով, միասնական Կորեայի դրոշի ներքո՝ խորհրդանշելով հաշտություն և միասնություն (Տե՛ս International Olympic Committee, Factsheet on the "North and South Korean Olympic Participation Meeting", https://olympics.com/ioc/news/factsheet-on-the-north-and-south-korean-olympic-participation-meeting (մուտք՝ 06.12.2023)):

Կորեայի բաժանման հետևանքով բաժանված ընտանիքների վերամիավորման առաջին գործնական քայլերն իրականացվեցին 1972 թ., երբ Կարմիր խաչի օգնությամբ բանակցություններ տեղի ունեցան Սեուլում և Փհենյանում: Փոխանակումները շարունակվեցին 2000-ական թթ. (2000, 2007, 2018 թթ.), որոնք կախված էին Հյուսիսի և Հարավի միջև դիվանագիտական մթնոլորտից: Այս հարցը մնում է միջկորեական հարաբերությունների չլուծված հարցերից մեկը (Ավելի մանրամասն տե՛ս **Boo D., Lee D.,** Divided Korean Families: Why Does It Take So Long to Remedy the Unhealed Wounds? Korea Journal of Population and Development, Vol. 21, No. 2, December 1992, էջ 145-174):

հանվել, եթե ճիշտ ուսումնասիրվեն և ընկալվեն ազգային ինքնության առանձնահատկություններն ու կրթական համակարգի դերը:

Ներկա հետազոտության նպատակն է՝ հասկանալ՝ ինչ ուղղություններով ու պայմաններում զարգացան Հարավային և Հյուսիսային Կորեայի կրթական համակարգերը, և որոնք էին նրանց գաղափարական հիմքն ու նպատակը՝ միաժամանակ ուսումնասիրելով կրթության հնարավոր դերն ընդհանուր ինքնության և Կորեայի վերամիավորման գործընթացում:

1. Հարավկորեական կրթական համակարգը

Հարավային Կորեան մեծ առաջնահերթություն է տալիս կրթությանը և ավելի մրցունակ է, քան, օրինակ, Ֆինլանդիայի կրթական համակարգը[5]: 20-

5 **Ֆինլանդիայում** և Հարավային Կորեայում կրթությունը համարվում է անհատական և հասարակական հաջողության միջոց: Ունեն ուսուցիչների կրթության լայնածավալ ծրագրեր, ներդրումներ են անում ուսուցիչների մասնագիտական զարգացման գործում՝ ապահովելով կրթության արդիականությունը: Ֆինլանդիան ուշադրություն է դարձնում սովորողների հավասար հնարավորությունների ապահովման վրա, իսկ Հարավային Կորեան անկախությունից հետո փորձել է նվազեցնել կրթական անհավասարությունը, երկու երկրներում սովորողներն ունեն որոշակի ինքնավարություն, և դպրոցներն աշակերտակենտրոն են: Արդյունքում երկու երկրների կրթական համակարգերը ձեռք են բերել միջազգային ճանաչում և հաճախ ուսումնասիրվում են կրթության ոլորտի մասնագետների կողմից՝ որպես կրթական համակարգի հաջող մոդելներ: Այնուամենայնիվ, երկու համակարգերն ունեն նաև զգալի տարբերություններ կրթության նկատմամբ իրենց մոտեցումներում՝ ներառյալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են ուսումնական ծրագիրը, գնահատումը, ուսուցման մեթոդները և ստանդարտացված թեստավորումը: Ֆիննական կրթությունը, օրինակ, հայտնի է ամբողջական զարգացման, նվազագույն տնային առաջադրանքների և ուսանողների միջև մրցակցության նվազեցման վրա շեշտադրմամբ: Ի հակադրություն ֆիննականի՝ Հարավային Կորեայի կրթական համակարգը հայտնի է իր խստությամբ, մրցակցությամբ և ակադեմիական նվաճումների վրա շեշտադրմամբ (Ավելի մանրամասն տե՛ս Ministry of Education and Culture of Finland, Finnish Education System, https://okm.fi/en/education-system, 20.09.2023: Տե՛ս նաև **Aho E., Pitkänen K., Sahlberg P.**, Policy Development and Reform Principles of Basic and Secondary Education in Finland since 1968; Washington, The World Bank, 2006, էջ 110-136):

Համեմատենք նաև **Սինգապուրի** կրթական համակարգի հետ: Երկու երկրներն էլ կարևորում են հատկապես ակադեմիական գերազանցությունը և ստանդարտացված թեստավորումը: Այնուամենայնիվ, Սինգապուրի կրթական համակարգն ավելի ճկուն է, ունի դասավանդման նորարարական մեթոդներ, որոնք նախատեսված են սովորողներին նախապատրաստելու համաշխարհային ասպարեզում ի հայտ եկող մարտահրավերներին: Իսկ Հարավային Կորեան հավատարիմ է ակադեմիական և մրցակցային կրթությանը: (Ավելի մանրամասն տե՛ս Ministry of Education Singapore, https://www.moe.gov.sg/ (մուտք՝ 07.12.2023)): Ցանկալի է անդրադառնալ նաև նրա «թույլ» կողմերին՝ համեմատելով **Էստոնիայի** կրթական համակարգի հետ: Էստոնական կրթական համակարգն ունի ավելի ուսանողակենտրոն, ներառական

րդ դարի կեսերին Հարավային Կորեայի կրթական համակարգն անկախ մնաց կամ մասամբ ազդվեց քաղաքական գաղափարախոսությունից և պահպանեց ավանդական կորեական կրթական համակարգի որոշ առանձնահատկություններ, բայց ենթարկվեց արևմտյան ու արդի արժեքների ազդեցությանը: Հարավային Կորեայի կրթական համակարգի հիմքում դրվեցին զարգացած պետության, ժողովրդավարության, մարդասիրության գաղափարները: Կրթական համակարգն ընդգծում է յուրաքանչյուր կորեացու ազգային ինքնությունը զարգացնելու, հավասարության գաղափարն ու պատասխանատվության զգացում սերմանելու և «սեփական ազգին պատկանելու զգացումը» դաստիարակելու անհրաժեշտությունը: Որոշ հեղինակներ կարծում են, որ պատկանելության այս զգացումը ազգային ինքնության գիտակցման պայման է[6]:

Հարավային Կորեայում կրթությունը սկսեց զարգանալ 1945 թ. անկախությունից հետո (չնայած վրա հասած ճգնաժամերին), իսկ 1950–1953 թթ. կորեական պատերազմի ժամանակ դասերը շարունակվում էին վրաններում կամ ժամանակավոր ապաստարաններում[7]: Պատերազմի ժամանակ Հարավային Կորեան ստացավ նաև միջազգա-

---

ու թվային ուսուցման մոտեցում: Այս առումով էստոնական կրթությունն ունի որոշակի «առավելություն», օրինակ՝ ունենալով ավելի ուսանողակենտրոն մոտեցում՝ կենտրոնանում է սովորողի քննադատական մտածողության, ստեղծարարության, խնդրի լուծման կարողությունների վրա, որը հակադրվում է հարավկորեական ավանդական կրթությանն ու ակադեմիական մրցակցությանը: Էստոնիայում դասի ընթացքում թվային տեխնոլոգիաների կիրառումը կարող է զարգացնել հմտություններ, որոնք ավելի արդիական են դառնում աշխատաշուկայում: Բայց նշենք, որ այս երկու երկրներն ունեն տարբեր առաջնահերթություններ ու մշակութային համատեքստ, հետևաբար, դասավանդման որևէ մեթոդ կարող է անհամատեղելի լինել մյուս երկրում: (Ավելի մանրամասն տե՛ս **Mehisto P., Kitsing M.**, Estonia: co-constructing the future we need now, Tartu, Ministry of Education and Research, 2021, տե՛ս նաև **OECD**, Education Policy Outlook in Estonia, OECD Education Policy Perspectives, No. 13, Paris, OECD Publishing, 2020):

6 Տե՛ս **Kim H. J.,** National Identity in Korean Curriculum; Canadian Social Studies, Vol. 38, N. 3, Spring 2004, էջ 5-7:

7 1905 թ. նոյեմբերի 17-ին Կորեան Ճապոնիայի հետ կնքել էր պայմանագիր, ըստ որի Կորեան հայտնվում էր Ճապոնիայի պրոտեկտորատի ներքո: Իսկ 1910 թ. օգոստոսի 22-ին կնքված պայմանագրով՝ Կորեական թերակղզում ամբողջ իշխանությունը հանձնվեց Ճապոնիայի կայսրին՝ Կորեական թերակղզին վերածելով ճապոնական գաղութի: Կորեան ազատագրվեց 1945-ին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Արդյունքում 38-րդ զուգահեռականով Կորեան բաժանվեց երկու մասի, ինչը պետք է ունենար ժամանակավոր բնույթ: Հարավում հաստատվեցին ամերիկյան զորքերը, իսկ հյուսիսային մասում՝ խորհրդային: Երբ սառը պատերազմի լարվածությունը սրվեց ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև, Կորեայում միասնական կառավարություն ստեղծելու բանակցությունները խափանվեցին: 1948 թ. ստեղծվեցին առանձին կառավարություններ. օգոստոսի 10-ին Հարավում՝ Կորեայի Հանրապետությունը Լի Սին Մանի գլխավորությամբ, սեպտեմբերի 9-ին Հյուսիսում՝ Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը Կիմ Իր Սենի գլխավորությամբ: Հետագա կորեական պատերազմն ավելի

յին հանրության օգնությունը, մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ն օգնություն ցույց տվեց դպրոցների կառուցման և դասագրքերի տպագրման հարցում: Արդեն 1970-ական թթ. հաղթահարվեցին նաև տնտեսական դժվարությունները, ինչի հիմքը որակյալ կրթությունն էր ու բարձր որակավորում ունեցող կադրերը: Հետագայում կառավարությունը քայլեր ձեռնարկեց՝ ստեղծելու հավասար կրթական հնարավորություններ ինչպես միջնակարգ, այնպես էլ բարձրագույն կրթության համար[8]: Անկախության հռչակումից հետո, 1949 թ. կրթության մասին օրենքով, տարրական կրթությունը դարձավ պարտադիր և անվճար: Այն նաև սահմանում էր կրթության հավասար հնարավորությունների մասին սկզբունքը[9]: Իսկ կորեական պատերազմի ավարտից հետո ընդունվեց անգրագիտությունը վերացնելու վերաբերյալ հնգամյա ծրագիր (1954-1958 թթ.)[10], որը տվեց դրական արդյունքներ. գրագիտության մակարդակը 1958 թ. դրությամբ 96 % էր[11]: Միջնակարգ կրթությունը դարձավ պարտադիր 1968 թվականին: Նման պայմաններում կրթված մարդկանց թիվն արագորեն աճել էր, իսկ անգրագիտության մակարդակը՝ զգալիորեն նվազել:

Սակայն Հարավային Կորեայի կրթական համակարգում կային բաց կողմեր: Սկզբնական շրջանում երկիրը զարգացնելու նպատակով կրթությունը միտված էր համապատասխան աշխատուժի ստեղծմանը, ուսանողները ստանում էին միայն գիտելիք, բայց չկար սեփական հմտություններն ու կարողությունները զարգացնելու հնարավորություն: Նաև կրթության հանդեպ ձգտումը և շրջանավարտների մեծ թիվը ստեղծում էին անհամապատասխանություն աշխատուժի պահանջարկի և առաջարկի միջև[12]: Մեկ այլ խնդիր է այն, որ, բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար, մրցակցությունը բավականին բարձր է, ինչի պատճառով սովորողները հաճախ դիմում են հավելյալ պարապմունքների, ինչը բերեց դպրոցական կրթության թուլացմանը: Խնդիրը լուծելու համար ներմուծվեց առանց

ամրապնդեց բաժանումը, որն ավարտվեց զինադադարի կնքմամբ, բայց՝ առանց պաշտոնական խաղաղության պայմանագրի (տե՛ս **Hwan K. M.**, A History of Korea: An Episodic Narrative, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 204-220):

8 Տե՛ս Education, the driving force for the development of Korea. Land of the morning calm develops into a prominent player in the global economy, London, Ministry of Education, 2015, էջ 9-10 (այսուհետ՝ Education, the driving force for the development of Korea):

9 Տե՛ս **Jeong M. R., Lee W. J.,** Korean Education: Educational Thought, Systems and Content, Understanding Korea Series No. 9, The Academy of Korean Studies, 2018, էջ 91:

10 Հնգամյա կրթական ծրագրի հիմնական նպատակներն էին՝ ընդլայնել կրթական հաստատությունները, բարեփոխել ուսումնական ծրագրերը, անցկացնել ուսուցիչների վերապատրաստում, ավելացնել պարտադիր տարրական կրթության հասանելիությունը: Ծրագրով նախատեսվում էր բարելավել տեխնիկական ու մասնագիտական կրթությունը երկրի տնտեսությունը վերակառուցելու նպատակով (Ավելի մանրամասն տե՛ս **Byun J. I., Lee G. A. et al**, 2011 Modularization of Korea's Development Experience. Development Process and Outcomes of Adult Literacy Education in Korea, Seoul, Korea Development Institute, 2012, էջ 38-47):

11 Տե՛ս Education, the driving force for the development of Korea, էջ 13:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 20:

քննությունների հաջորդ մակարդակի դպրոց ընդունելության համակարգը, իսկ 1980-ական թթ. համալսարանների թիվն աճեց: 2000-ական թթ. ներդրվել են նորարարական ծրագրեր, զարգացել է հեռավար ուսուցումը: 2023-2026 թթ. համար կրթության նախարարությունը նախատեսում է իրականացնել միջնակարգ կրթության կարողությունների բարելավմանն ուղղված միջոցառումներ, իսկ կրթության բնագավառում առաջացած խնդիրներն առաջարկվում է լուծել նոր թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության (AI, VR, AR) միջոցով[13]: Սակայն հարավկորեական կրթության այժմյան խնդիրներից են մնում բարձր մրցակցության պատճառով սովորողների շրջանում սթրեսի բարձր մակարդակն ու գործադրվող ճնշումը:

Հարավային Կորեայում կրթությունը ծառայում է մի քանի նպատակների: Մասնավորապես, կրթության առաջնային նպատակն է՝ հասարակության համար կրթել ժողովրդավարական հայացքներով քաղաքացիներ: 2015 թվականին վերանայված ուսումնական ծրագրի նպատակն էր՝ կրթել ժողովրդավար ու ստեղծագործ անհատների: Արդյունքում սովորողը պետք է ունենա հետևյալ ունակությունները.

- «...մշակել տեղեկատվությունը՝ օգտագործելով գիտելիքները՝ լուծելու տարբեր ոլորտների խնդիրներ,
- օգտագործել գիտելիքներն ու փորձը որպես ստեղծագործական հմտությունները վեր հանելու միջոց,
- ունենալ գեղագիտական ընկալում՝ բացահայտելու ու գնահատելու կյանքի իմաստը...,
- տարբեր իրավիճակներում մտքերն ու հույզերը հստակ արտահայտելու և ուշադիր լսելու կարողություն,
- հասարակության մասը լինելու զգացում, որը հնարավորություն է տալիս ակտիվորեն մասնակցել հասարակական գործունեությանը՝ պահանջվող համոզմունքներով և վերաբերմունքով...»[14]:

Բացի վերը նշվածներից, վերջին տարիներին պետությունը կենտրոնացած է համաշխարհային հանրությանն ինտեգրվելու գործընթացի վրա: Այստեղ կրթության միջոցով ձգտում են նաև պատրաստել քաղաքացիների, ովքեր տեղյակ են գլոբալ խնդիրներին, տիրապետում են անգլերենին և ունակ են շփվել միջազգային հանրության հետ:

Կրթական համակարգը մեծ դեր ունի մշակույթի և ինքնության պահպանման ու առաջմղման գործում: Կորեայի պատմությունը, լեզուն և մշակու-

---

13 Տե՛ս 2023 년 주요업무 추진계획. 교육개혁, 대한민국 재도약의 시작; 교육부, 2023, 4~5 쪽 (2023 թվականի խոշոր բիզնեսի իրականացման ծրագիր: Կրթական բարեփոխումներ, Կորեայի առաջընթացի սկիզբ, Կրթության նախարարություն, 2023, էջ 4-5):

14 Ministry of Education, Education System in Korea, https://english.moe.go.kr/sub/infoRenewal.do?m=0301&page=0301&s=english,(մուտք՝ 25.09.2023).

թային արժեքները սովորաբար ներառված են ուսումնական ծրագրում՝ ուսանողների մեջ ազգային հպարտության և ինքնության զգացում սերմանելու համար: Հարավային Կորեան մեծ ուշադրություն է դարձնում ակադեմիական նվաճումներին՝ սահմանելով ակադեմիական բարձր չափանիշներ: Կրթությունը դիտվում է որպես սովորողների հետագա կարիերայում հաջողության հասնելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու միջոց և տալիս է արտասահմանում կրթությունը շարունակելու հնարավորություն: Կրթությունը համարվում է սոցիալական կարգավիճակը բարելավելու միջոց և հաճախ ծառայում է արագ արդյունաբերականացմանն ու տնտեսական աճին նպաստելուն, այլ կերպ ասած՝ դիտվում է որպես քաղաքացիներին համաշխարհային տնտեսության մեջ մրցելու համար անհրաժեշտ հմտություններով և գիտելիքներով զինելու միջոց: Կրթության միջոցով Հարավային Կորեան նպատակ ունի խթանել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ կարգապահությունը, աշխատասիրությունը, ընդհանուր ինքնության զգացողությունը, ներգրավվածությունը համայնքային կյանքին, որոնք կարևոր են համարվում հասարակության ընդհանուր բարեկեցության համար[15]:

Հարավկորեական կրթական համակարգում օգտագործվում է 6–3–3–4 համակարգը, որի համաձայն՝ սովորողը պետք է վեց տարի հաճախի տարրական դպրոց, երեքական տարի՝ միջին և ավագ և չորս տարի՝ համալսարան[16]: Գործում է նաև **նախադպրոցական կրթությունը**, որի կրթական ծրագիրը ներդրվել էր 1969 թվականից: Այն 2012 թ. վերանվանվեց «Նուրի կրթական ծրագիր» և նախատեսված էր հինգ տարեկան երեխաների համար, իսկ 2013 թ. ծրագրում ընդգրկվեցին 3–5 տարեկան երեխաները[17]: Նման ուսումնական ծրագրի նպատակն է «խաղերի միջոցով զարգացնել երեխաների մարմինն ու միտքը, դրական բնավորությունը և դնել ժողովրդավար քաղաքացու հիմքեր»[18]:

Տարրական և միջնակարգ դպրոցներում այժմ կրթությունը կազմակերպվում է ավանդական, իսկ բարձրագույն կրթությունը՝ ամերիկյան մոդե-

---

15 Տե՛ս The School Curriculum of the Republic of Korea; Ministry of Education, Science and Technology, Korea, 2008, էջ 6-7:

16 Տե՛ս **Kim E. G., Han Y. K.,** Attracting, Developing and Retaining Effective Teachers: Background Report for Korea, Seoul, Korean Educational Development Institute, 2002, էջ 16:

6–3–3–4 համակարգն առաջին անգամ ներդրվել է ԱՄՆ-ում՝ ապահովելով կրթության զարգացման համակարգված և հետևողական մոտեցում: Այս համակարգը Հարավային Կորեայի կրթական համակարգ մուտք գործեց ամերիկացիների միջոցով Կորեայի ազատագրումից հետո:

17 Տե՛ս Understanding the 2019 Revised Nuri Curriculum, KICCE Policy Brief, Issue 14, Korea Institute of Child Care and Education, December 2019, էջ 5-6:

18 Ministry of Education, Pre-Primary Education, https://english.moe.go.kr/sub/infoRenewal.do?m=0304&page=0304&s=english, (մուտք՝ 26.09.2023).

լով[19]: 1985 թվականից տարրական և միջնակարգ կրթությունը պարտադիր է: 3-րդ դասարանից սկսած դպրոցներում հիմնականում դասավանդվում են կորեերեն, օտար լեզու, պատմություն, հասարակագիտություն, էթիկա, արվեստ, երաժշտություն, մաթեմատիկա, բնագիտություն, ֆիզկուլտուրա, գործնական դասընթաց, ինքնուրույն գործունեություն և հատուկ գործունեություն առարկաները:

Ավագ դպրոցից սովորողը կարող է ընտրել մասնագիտական ուղղվածություն: Ավագ դպրոցներն այստեղ բաժանվում են մի քանի տեսակի՝ ընդհանուր, մասնագիտական, հատուկ նշանակության (գիտության, արվեստի, լեզուների և այլ բնագավառների համար նախատեսված դպրոցներ), ինքնավար դպրոցներ: Կան առանձին դպրոցներ շնորհալի սովորողների համար: Այս դպրոցները տարբերվում են ուսումնական ծրագրերով և ուղղվածությամբ: Նման դպրոցները, կառավարության 2019 թ. որոշմամբ, անվճար են[20]: Ինչպես նաև՝ սովորողը հնարավորություն ունի միջին դպրոցից հետո ուսումը շարունակել քոլեջներում (կան կրտսեր, առցանց, մանկավարժական քոլեջներ և այլն):

Պետությունն ուշադրության կենտրոնում է պահում նաև հատուկ (ներառական) կրթությունը: Հաշմանդամություն ունեցող երեխաները ևս ստանում են անվճար պարտադիր կրթություն՝ մանկապարտեզից սկսած: Նրանք հաճախում են կամ հատուկ կրթական կենտրոններ, կամ դպրոցների ներառական դասարաններ:

Միջին և ավագ դասարաններում դասավանդվում է նաև «Բարոյագիտություն» առարկան: Այն սովորեցնում է բարոյական նորմեր, էթիկա, միևնույն ժամանակ՝ ձևավորում ինքնություն, քաղաքացիական գիտակցություն: Կրտսեր դասարաններում «Բարոյագիտութուն» առարկայի շրջանակներում ուսումնասիրվում են հետևյալ թեմաները՝ «Անձնական կյանք», «Կյանքն ընտանիքում և դպրոցում», «Սոցիալական կյանք», «Ազգային և համայնքային կյանք»[21]: Այս դասարաններում թեև քիչ է ուսումնասիրվում պետության ու ազգի թեման, այնուամենայնիվ, բացը լրացվում է ավագ դասարաններում: Հատկապես 8-րդ դասարանում անդրադառնում են ազգային արժեքներին, պետության ու ազգի զարգացմանը, ինչպես նաև՝ Հյուսիս-Հարավ հարաբերություններին ու վերամիավորման խնդրին, ազգային համայնքի զարգացմանն ու վերամիավորված Կորեայի ապագային: Հատկապես 2-րդ՝ «Հարա-

19 Տե՛ս **Толстокулаков И. А.,** Очерк истории корейской культуры, Владивосток, Издательство Дальневосточнего университета, 2002, էջ 150:

20 Տե՛ս Ministry of Education, Education system in Korea, https://english.moe.go.kr/sub/infoRenewal.do?m=0301&page=0301&s=english (մուտք՝ 15.06.2023):

21 Տե՛ս **Kim H. J.,** նշվ. աշխ., էջ 5-7:

բերություններ սոցիալական համայնքի հետ» բաժնում ուսուցանվում են հետևյալ թեմաները.

- «Ինչպե՞ս հասկանալ Հյուսիսային Կորեան»,
- «Ինչպե՞ս են ապրում Հյուսիսային Կորեայի բնակիչները և ի՞նչ նշանակություն ունեն նրանք մեզ համար»,
- «Որո՞նք են միավորման հեռանկարները»,
- «Ինչու՞ է անհրաժեշտ միավորումը»,
- «Ինչպիսի՞ն պետք է լինի միասնական Կորեան»[22]:

Ավագ դպրոցում ավելի հանգամանորեն է ուսումնասիրվում վերամիավորման հարցը: Նախ քննարկվում է խաղաղության հիմնահարցը, ապա առանձին ենթաբաժիններով քննարկվում են Կորեայի բաժանման պատճառներն ու գործընթացը, միավորմանն ուղղված քաղաքականությունն ու խնդիրները, միավորման անհրաժեշտության հարցն ու դժվարությունները[23]: Այսպիսով, սովորողը կարող է որոշակի պատկերացում կազմել ազգային ինքնության, պետության, ներկա խնդրի առանձնահատկությունների, ինչպես նաև՝ միասնական Կորեայի ապագայի վերաբերյալ: Սա հնարավորություն կտա սովորողին՝ ձևավորել ազգային ինքնագիտակցություն, սեփական տեսակետ՝ խնդրի վերաբերյալ և պահպանել ազգային ինքնութենական այն արժեքները, որոնք կարող են ստեղծել միասնական ազգ: Իսկ սովորողին ժողովրդավար քաղաքացի ձևավորելու գործում ուղղորդում է հասարակական առարկաների ուսուցումը: Օրինակ՝ «Հասարակություն. Մշակույթ» առարկայի շրջանակներում ուսումնասիրվում են սոցիալական և մշակութային հարցերը, մարդու սոցիալական վարքը, մշակութային առանձնահատկությունները: Այդ գիտելիքների հիման վրա սովորողը՝ որպես ժողովրդավար քաղաքացի, կարող է որոշումներ կայացնել և լուծել սոցիալական խնդիրներ: Դասագրքում, որպես օրինակ, ցույց են տրվում, թե ինչպես կարող են լուծել աղքատության, գենդերային անհավասարության կամ ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության հարցերը[24]:

---

22 **정창우 외 12 인,** 중학교, 도덕 2, 서울, (주)미래엔, 2020, 107~133 쪽 (**Ջոն Չանգ Ու և ուրիշներ**, Միջին դպրոց, Բարոյագիտություն 2, Սեուլ, Mirae N, 2020, էջ 107–133), https://ebook.mirae-n.com/@kb2062/cover (մուտք՝ 22.09.2023).

23 Տե՛ս **정창우 외 12 인,** 고등학교, 인문학적 감성과 도덕적 상상력, 서울, (주)미래엔, 2019, 162~176 쪽 (**Ջոն Չան Ու և ուրիշներ**, Ավագ դպրոց, Մարդասիրական զգայունություն և բարոյական երևակայություն, Սեուլ, Mirae N, 2019, էջ 162–176), https://ebook. mirae-n.com/@kb2115/cover (մուտք՝ 22.09.2023):

24 Տե՛ս **손영찬 외 4 인,** 고등학교, 사회·문화, 서울, (주)미래엔, 2020, 148~157 쪽 (**Սոն Յոն Չան և ուրիշներ**, Միջին դպրոց, Հասարակություն. Մշակույթ, Սեուլ, Mirae N, էջ 148–157), https://ebook.mirae-n.com/@kb2102/cover (մուտք՝ 23.09.2023):

Բարձրագույն կրթության և գիտության մեջ Հարավային Կորեան շարունակում է ներդրումներ անել. ստեղծվեցին ուսուցման այնպիսի համակարգեր, որոնք շարունակական կրթության ու ինքնազարգացման հնարավորություն են տալիս: Այստեղ բարձրագույն կրթություն ստանալ ցանկացողների տոկոսը բավականին բարձր է (2019 թ. դրությամբ՝ 67,8 %), հետևաբար կառավարության կողմից ավելացվել են կրթաթոշակային ծրագրերը: Համալսարանում սովորելու համար հանձնում են ընդունելության քննություններ՝ CSAT (College Scholastic Ability Test), իսկ բժշկության և իրավագիտության համար պահանջվում են ընդունելության լրացուցիչ քննություններ[25]:

Համալսարաններն, իրենց հերթին, առաջարկում են մասնագիտությունների լայն շրջանակ: Բակալավրիատում ուսումնառությունը չորս տարի է, իսկ որոշ մասնագիտական ծրագրեր կարող են ավելի երկար տևողություն ունենալ (օրինակ, բժշկական ուղղվածության համալսարաններում՝ վեց տարի), մագիստրատուրայում՝ երկու, իսկ ասպիրանտուրայում՝ չորս: Այստեղի համալսարանական կրթությունը հայտնի է խիստ և պահանջկոտ ուսումնական ծրագրերով, որոնք ներառում են ինչպես մասնագիտական ու հիմնական դասընթացներ, այնպես էլ՝ հարակից գիտությունների, օտար լեզուների դասընթացներ: Հարավային Կորեայի կառավարությունը խրախուսում է ուսանողներին՝ մասնակցել միջազգային փոխանակման ծրագրերին, սովորել արտերկրում՝ ընձեռելով օտար մշակույթների և ակադեմիական փորձի հետ ծանոթանալու հնարավորություններ:

Հարավային Կորեայի համալսարաններն առաջարկում են նաև մագիստրոսական և դոկտորական ծրագրեր նրանց համար, ովքեր հետաքրքրված են գիտական աստիճաններ ստանալու հեռանկարով: Հարավային Կորեայի բարձրագույն ուսումնական հաստատություններն ավելի են կենտրոնանում հետազոտությունների և նորարարությունների վրա: Գիտահետազոտական նախագծերում ներգրավված են և՛ պրոֆեսորներն ու դասախոսները, և՛ ուսանողները:

Հարավային Կորեան աչքի է ընկնում իր բարձրագույն ուսումնական հաստատություններով՝ Սեուլի ազգային համալսարանը, Յոնսեի համալսարանը, Կորյոյի համալսարանը, Կորեայի առաջատար տեխնոլոգիաների ինստիտուտը և այլն: Համաշխարհայնացման, մշակութային ու կրթական իմիջը բարելավելու, համալսարանների կրթական ծրագրում անգլերեն լեզվով կրթություն ավելացնելու հետ կապված՝ վերջին տասնամյակներում օտարերկրյա ուսանողների թիվը զգալի աճել է: Սա կարևոր է ոչ միայն կրթու-

25 CSAT-ում (կամ Suneung, 수능) ներառված առարկաներն են՝ կորեերեն, մաթեմատիկա, անգլերեն, Կորեայի պատմություն, հասարակական գիտություններ, բնական գիտություններ, երկրորդ օտար լեզու կամ չինարեն (Տե՛ս KICE, College Scholastic Ability Test, https://www.kice.re.kr/sub/info.do?m=0205&s=english (մուտք՝ 21.11.2023)):

թյան, այլև՝ երկրի տնտեսության համար: Քանի որ երկրի բնակչությունը ծերանում է, և աստիճանաբար երիտասարդ մասնագետների պակաս է զգացվում, ապա համալսարանն ավարտած օտարերկրացի ուսանողներին հնարավորություն է տրվում աշխատել Հարավային Կորեայում[26]:

Այսպիսով՝ ազգային ինքնությունը ենթադրում է նաև ազգային միասնություն, և կարծես թե Հարավային Կորեայի կրթական համակարգը միտված է պահպանելու այդ միասնությունը: Հարավային Կորեայի կրթական համակարգը կարևոր դեր է խաղում ազգային ինքնության ձևավորման գործում: Կորեայի պատմությունն ու մշակույթն ուսումնական ծրագրում ինտեգրված են այնպիսի առարկաներով, ինչպիսիք են կորեական պատմությունը, լեզուն և էթիկան, որոնք ընդգծում են կորեական ինքնության և մշակութային արժեքների կարևորությունը:

2. Հյուսիսկորեական կրթական համակարգը

Հյուսիսկորեական ինքնությունը խորապես միահյուսված է պետական գաղափարախոսության և քաղաքական նպատակների հետ: Կարևոր են ինքնության մի քանի ասպեկտներ, որոնք տեղ են գտել նաև կրթական համակարգում: Նախ ինքնության առանցքը Ջուչեի գաղափարախոսությունն է, որը կազմվել է Կիմ Իր Սենի կողմից՝ ընդգծելով ինքնապահովման և ազատության գաղափարները[27]: Կրթության միջոցով փոխանցվում է, որ Ջուչեն առաջնորդող սկզբունքն է երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերի համար: Այնուհետև՝ անհատի պաշտամունքը, առաջնորդների ձեռքբերումները մեծապես ընդգծվում են՝ հաճախ ստվերելով պատմական կամ մշակութային այլ գործիչների:

Գաղափարախոսության մեջ հստակ սահմանված դրույթներ չկան կրթության վերաբերյալ, սակայն առաջնորդվում են որոշակի սկզբունքներով: Օրինակ՝ գաղափարական կրթությունը. դեռ վաղ տարիքից երեխաները սովորում են Ջուչեի սկզբունքները, հայրենասիրության, առաջնորդի ու պետության հանդեպ նվիրվածության զգացումը: Սովորողներից ակնկալվում է

26 Տե՛ս **Ким Г. Н.,** Республика Корея, Алматы, Дайк-Пресс, 2010, էջ 46-47:

27 Ջուչե կամ չուչխե-կոր.՝ 주체사상 [juche sasang]: Հասկացությունը հաճախ թարգմանվում է որպես «ինքնապահովում»: Ջուչեն Հյուսիսային Կորեայի պաշտոնական պետական համապարփակ գաղափարախոսությունն է, որը ձևավորում է Հյուսիսային Կորեայի կյանքի տարբեր ասպեկտներ, ներառյալ՝ կրթությունը: Ընդգծում է այն գաղափարը, որ կորեացի ժողովուրդն է ձևավորում իր ճակատագիրը՝ առանց արտաքին օգնության (Տե՛ս **Hoare J. E.,** Historical Dictionary of the Democratic People's Republic of Korea, The Scarecrow Press, UK, 2012, էջ 192):

ինքնուրույն հասկանալ ու յուրացնել գաղափարախոսության սկզբունքները, ինչը ենթադրում է քննադատական մոտեցում:

Կարևոր սկզբունք է կրթության և քաղաքականության փոխշաղկապումը: Սա ներառում է ուսումնական ծրագրերի մշակման, ուսումնական նյութերի ընտրության և կրթական համակարգի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ որոշումները: Ուսումնական ծրագիրը մշակված է Ջուչեի սկզբունքներին համապատասխան, իսկ ուսումնական պլանն ու դասագրքերն ընդգծում են առաջնորդների ձեռքբերումներն ու պետական գաղափարախոսության հիմքերը, կուսակցության պատմությունը, ինքնապահովումն ու արտաքին ազդեցության բացառումը[28]:

Կրթության և գաղափարախոսության միջև այս սերտ կապը կենտրոնական դեր է խաղում քաղաքական վերահսկողության պահպանման և Հյուսիսային Կորեայի բնակչության հավաքական ինքնության ձևավորման գործում:

Կրթության մեջ շեշտը դրվում է հակաամերիկյան քարոզչությանը և ուսուցանվում, որ ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները Հյուսիսային Կորեայի գլխավոր թշնամիներն են, և երկրի պայքարն արտաքին ագրեսիայի արդյունք է: Հաջորդ ասպեկտը, որին կցանկանայինք անդրադառնալ, մեկուսացումն է արտաքին աշխարհից, ինչն ուժեղացվում է կրթության միջոցով: Արտասահմանյան աղբյուրներից տեղեկատվության հասանելիությունը խստորեն վերահսկվում է, իսկ սովորողներին չեն խրախուսվում նման գիտելիքները: Երկիրը հաճախ ներկայացվում է որպես ինքնաբավ և բարգավաճող՝ չնայած միջազգային պատժամիջոցներին:

Հյուսիսային Կորեայի կրթական համակարգը ներառում է ռազմական ուսուցում, որն իրականացվում է սովորողների վաղ տարիքից, իսկ հայրենիքի պաշտպանությունը համարվում է պարտականություն: Կարևոր ասպեկտ է մշակույթի ուսուցումը, մշակութային ինքնության պահպանումը: Համազգեստը, սանրվածքը և նույնիսկ լեզվի օգտագործումը խստորեն վերահսկվում են համապատասխանությունն ապահովելու, ազգայինը պահպանելու և արտաքին ազդեցությունը կանխելու համար:

Եվ վերջին՝ պատմական իրադարձությունների ժխտման ասպեկտը. մասնավորապես, խոսքը վերաբերում է կորեական պատերազմի պատասխանատվության հերքմանը և Հյուսիսային Կորեային վերապահում զոհի դերը՝ ներկայացնելով պատմության ռեվիզիոնիստական տարբերակը:

---

28 Տե՛ս **윤종진,** 김정일 등장 이후의 '정치사상교양' 정책의 변화 분석; '통일정책연구' 13 권 2 호, 2004, 202~204 쪽 (**Յուն Զոն Զին**, Կիմ Չեն Իրի «քաղաքական գաղափարական կրթության» քաղաքականության վերափոխման վերլուծություն, «Միավորման քաղաքականության ուսումնասիրություն», հատ. 13, N 2, էջ 202–204):

Հյուսիսկորեացիների իրավունքները սահմանափակ են նույնիսկ կրթության ոլորտում՝ տեղեկատվության նկատմամբ ռեժիմի խիստ վերահսկողության պատճառով, ուստի ազգային ինքնության նրանց ըմբռնումը կարող է ձևավորվել հիմնականում պետության կողմից վերահսկվող կրթության տված գիտելիքներով:

Մինչ 1948 թ. անկախ պետություն հռչակվելը, Հյուսիսային Կորեան սկսել էր հիմքեր ստեղծել կրթական համակարգի համար. 1945 թ. պետական և մասնավոր դպրոցները վերածվել էին «ժողովրդական» դպրոցների: 1946 թ. ընդունված «Պետական քաղաքականության 20 սկզբունքներ» փաստաթղթով շեշտվում էր պարտադիր կրթության ու կրթական հաստատությունների ստեղծման անհրաժեշտությունը: Իսկ արդեն 1977 թ. Կիմ Իր Սենը կոչ արեց ստեղծել սոցիալիստական կրթության հիմքերը Ջուչեի գաղափարախոսության հիման վրա[29]: Կառավարությունն անվճար ուսուցում և ուսումնական պարագաներ էր տրամադրում բանվոր դասակարգի ընտանիքների երեխաներին, գյուղացիներին, զինվորականներին և այլ խմբերի: Այժմ Հյուսիսային Կորեայում կրթությունը համընդհանուր է, տարրական և միջնակարգ կրթությունը պարտադիր և անվճար է բոլոր քաղաքացիների համար: Հյուսիսային Կորեայի բնակչության (15 տարեկանից բարձր) մեծ մասն ունի միջնակարգ կրթություն[30]:

1975 թ. համակարգի փոփոխություններից հետո դպրոցական համակարգը պահպանեց իր հիմնական կառուցվածքը, ինչպես նաև տիպիկ սոցիալիստական կրթական համակարգի կառուցվածքը: Ջուչեի գաղափարախոսությունը ևս ներդրվեց կրթական համակարգի մեջ, որով կրթական համակարգից պահանջվում էր կրթել քաղաքական գիտակցությամբ անհատների, որոնք կհետևեին կուսակցության ընթացքին: 1990-ական թթ. ճգնաժամի ընթացքում և դրանից հետո փորձ արվեց աշխուժացնել կրթության ոլորտը[31]:

---

29 Տե՛ս **Пак Х. С., Толстокулаков И. А.,** Трансформация системы образования Республики Корея и КНДР в послевоенный период, Россия и АТР, 2005, N 4, էջ 76-77:

30 Տե՛ս Country meters, Население Северной Кореи, https://countrymeters.info/ru/Democratic_People's_Republic_of_Korea (մուտք՝ 22.05.2023):

31 ԿԺԴՀ-ի տնտեսության վրա բացասական ազդեցություն ունեցավ Չինաստանի կողմից օգնության կրճատումը և ԽՍՀՄ-ի փլուզումը: Արդյունքը եղավ այն, որ 1990-ական թթ. սկզբին ԿԺԴՀ-ի տնտեսությունը հայտնվեց ճգնաժամի մեջ: Այն ավելի սրվեց, քանզի ընթանում էր սպառազինության մրցավազք, դեռևս պահպանվում էր մեծ բանակը, նախկին արտաքին օգնությունն այլևս առկա չէր, և կար սննդի պակաս: Սովի պատճառներից էր 1995 թ. օգոստոսի ջրհեղեղը, որը ոչնչացրեց բրնձի բերքի մեծ մասը: Մյուս պատճառը միջազգային մատակարարումների կտրուկ կրճատումն էր, երբ, գյուղատնտեսական ապրանքների գների աճով պայմանավորված, Չինաստանը նվազեցրեց պարենի մատակարարումը: Պատճառներից էր նաև ձախողված տնտեսական քաղաքականությունը: Արդեն 1998 թ. պայմանները որոշ չափով բարելավված էին՝ շնորհիվ միջազգային կազմակերպությունների, որոնք Հյուսիսային Կորեային ապահովեցին պարենով մինչև 2000 թ. (Տե՛ս **Seth M. J.,** A History of Korea: From Antiquity to the Present, Lanham, Rowman & Littlefield Publishers, 2011, էջ 439-448):

Այս նպատակով Հյուսիսային Կորեան դիմեց միջազգային օգնությանը և ավելի շատ ուշադրություն դարձրեց գիտության, տեղեկատվության և տեխնոլոգիայի ոլորտներին: Սակայն սոցիալ-տնտեսական վատ դրությունը հնարավորություն չտվեց կրթական համակարգին զարգանալու[32]: Միայն Կիմ Չեն Ընի ժամանակ՝ 2012 թ., որոշակի փոփոխություններ արվեցին կրթական ոլորտում՝ փորձելով այն համապատասխանեցնել միջազգային պահանջներին: Հիմնական շեշտը դրվեց տեխնիկական կրթության վրա՝ այն նպատակով, որ տեխնոլոգիական առաջընթացով կվերականգնվի տնտեսությունը[33]:

Բացի սոցիալ-տնտեսական դրությանը, առկա էր նաև քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև հեռավորության խնդիրը: Կրթությունը հասանելի դարձնելու համար կառավարությունը շեշտը դրեց հեռավար ուսուցման վրա, ինչի արդյունքում կրթությունն ամբողջությամբ վերահսկվում է[34]: Այժմ բոլոր հաստատություններն ընդլայնվում են հեռավար ուսուցման միջոցով: Հաջորդ մարտահրավերը Covid-19 համաճարակով պայմանավորված արտակարգ իրավիճակն էր: Այստեղ համաճարակի հասցրած վնասները դժվար է գնահատել, քանի որ պետությունը չի հրապարակում համաճարակի վերաբերյալ տվյալներ՝ թույլ չտալով արտաքին միջամտություն կամ օտար երկրներից այցելություններ: 2020 թ. սեպտեմբերի վերջին ՅՈՒՆԻՍԵՖ-ը հայտնեց, որ Հյուսիսային Կորեան աստիճանաբար վերաբացում է դպրոցները[35]:

Հյուսիսային Կորեան մասնակցություն չի ունեցել կրթության զարգացմանն առնչվող միջազգային միջոցառումներին: Միայն վերջին տարիներին հյուսիսկորեացի աշակերտները մասնակցել են մաթեմատիկայի օլիմպիադաների, որոնց արդյունքները հայտնի չեն: Կիմ Չեն Իր-ն ուշադրությունը բևեռեց նաև գիտության զարգացմանը: Մինչ այդ Հյուսիսային Կորեան համաշխարհային գիտական հրապարակումներում մասնակցություն չէր ունեցել: Այսօր նա ունի ութսունհինգ հազար հոդված գիտական ամսագրերում: Սակայն շատ հոդվածներ հասանելի են միայն հյուսիսկորեական կայքէջերի միջոցով: Հյուսիսային Կորեայի մեկուսացումը նույնպես իր դերն ուներ գիտական և կրթական կյանքի զարգացման վրա: Այժմ մի շարք պայմանագրեր են կնքվել այլ երկրների հետ (Չինաստան, Բուլղարիա, Չեխիա, Կուբա) դիպլոմների և գիտական աստիճանների ճանաչման վերաբերյալ: Ինչպես արդեն

32 Տե՛ս **Spezza G.,** Education and Development in North Korea: The Push for a "Science-Based Economy" Under Kim Jong Un, Issue Brief, February 11, 2021, էջ 3-4:

33 Տե՛ս KBS World, Kim Jong-un Stresses Computer and Military Education, http://world.kbs.co.kr/service/news_view.htm?lang=e&Seq_Code=93843 (մուտք՝ 09.06.2023):

34 Տե՛ս **Spezza G.,** նշվ. աշխ., էջ 5-6:

35 Տե՛ս Reliefweb, UNICEF EAPRO Education COVID-19 Response Update–September, https://reliefweb.int/report/world/unicef-eapro-education-covid-19-response-update-september (մուտք՝ 10.06.2023):

նշվել է, ուսանողները հասանելիության խնդիր ունեն ժամանակակից կրթական նյութերին ու տեխնոլոգիաներին[36]: Այնուամենայնիվ, ուսանողները նպատակ ունեն Հյուսիսային Կորեայում գործարկել կենսատեխնոլոգիայի, ծրագրային ապահովման, նանոարդյունաբերության, տեսախաղերի և առցանց ուսուցման հարթակների սեփական տարբերակը:

Հյուսիսային Կորեայում կրթությունը բնութագրվում է բոլոր մակարդակներում գաղափարախոսական ուժեղ շեշտադրմամբ՝ նախադպրոցականից մինչև միջնակարգ կրթություն: Գործում են երեք տեսակի դպրոցներ՝ հանրակրթական, շարունակական և հատուկ նշանակության: Հանրակրթական համակարգը ներառում է մանկապարտեզը, տարրական ու միջնակարգ դպրոցը և բարձրագույն կրթությունը:

Նախադպրոցական կրթությունը Հյուսիսային Կորեայում պարտադիր չէ, սակայն հասանելի է 4–6 տարեկան երեխաների համար՝ երկու տարի տևողությամբ: Նախադպրոցական հաստատությունները կենտրոնանում են հիմնական հմտությունների՝ լեզվի, տարրական մաթեմատիկայի, ֆիզիկական դաստիարակության և արվեստի վրա, ինչպես նաև վաղ տարիքից երեխաներին ծանոթացնում են պետական գաղափարախոսությանը[37]:

Տարրական դպրոցում, որը կոչվում է նաև ժողովրդական դպրոց, ուսանում են չորս տարի: Այստեղ ևս շեշտը դրվում է գաղափարախոսության և պետության հանդեպ հավատարմության վրա: Այս մակարդակում դասավանդվող առարկաները ներառում են՝ կորեերեն, մաթեմատիկա, գիտություններ, ֆիզիկական կրթություն, ինչպես նաև՝ օտար լեզուներ և արվեստներ:

Միջնակարգ դպրոցն ապահովում է վեցամյա կրթություն: Ուսումնական ծրագիրը մնում է կենտրոնացած պետական գաղափարախոսության վրա: Այս մակարդակում սովորողները դասակարգվում են տարբեր ուղղություններով՝ ելնելով իրենց ակադեմիական արդյունքներից, կարող են ընտրել գիտության կամ արվեստի ավելի մասնագիտացված դպրոցներ: Խրախուսվում են արտադասարանական միջոցառումներին մասնակցությունը, որոնք ևս ամրապնդում են հավատարմությունը ռեժիմին[38]:

Ժողովրդական դպրոցներում դասավանդվող հիմնական առարկաներն են՝ կորեերենը, մաթեմատիկան, ֆիզկուլտուրան, արվեստը և երաժշտությունը: Այս առարկաներին զուգահեռ՝ ավագ դասարաններում դասավանդվում են նաև քաղաքական բնույթ ունեցող առարկաներ՝ «Մեծ Կիմ Իր

36 Տե՛ս **Spezza G.,** նշվ. աշխ., էջ 7:
37 Տե՛ս **Park H. S.**, North Korea: The Politics of Unconventional Wisdom, London, Lynne Rienner Publisher, 2002, էջ 51-52:
38 Տե՛ս նույն տեղում, էջ 52–53:

Սենը», «Կոմունիստական բարոյականությունը», «Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը»[39]:

Հատուկ նշանակության դպրոցներ կարող են հաճախել միայն տաղանդավոր կամ վերնախավի երեխաները: «Այն բաղկացած է հեղափոխական դպրոցից, որը նաև կոչվում է էլիտար դպրոց և ուսումը տևում է հինգ տարի (5–10 տարեկան), արվեստի և սպորտի դպրոցները (6–18 տարեկաննե-րի համար), օտար լեզուների դպրոցները (10–18 տարեկան) և գիտական դպրոցը (10–21 տարեկան)»[40]:

Բարձրագույն կրթությունն ունի ակադեմիական և շարունակական կրթության երկու համակարգ: Ակադեմիական բարձրագույն կրթությունը բաղկացած է համալսարաններից (4–6 տարի), միջնակարգ դպրոցի ուսուցիչ-ների մանկավարժական քոլեջից (4 տարի), տարրական դպրոցների ուսուցիչ-ների համար մանկավարժական քոլեջից (3 տարի) և կրտսեր քոլեջներից (3 տարի): Համալսարանում սովորելուց հետո շրջանավարտները կարող են ու-սումը շարունակել մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Համալսա-րանների շարքում ամենահեղինակավորը Կիմ Իր Սենի անվան համալսա-րանն է (1946 թ.): Սա պետությունում առաջիններից մեկն էր, որ ստեղծեց հա-մալսարանական կայքէջ[41]: Համալսարանն ունի տասնվեց հազար ուսանող և երկու հիմնական ֆակուլտետ՝ սոցիալական գիտությունների և բնական գի-տությունների[42]: Հյուսիսկորեական համալսարաններում ուսանում են նաև օտարերկրացի ուսանողներ և՛ Ասիայից, և՛ Եվրոպայից, գերակշիռ թիվ են կազմում չինացի ուսանողները:

Կրթական համակարգի հաջորդ ձևը **շարունակական կրթության** համակարգն է: Այս պարագայում համալսարանը կամ շարունակական բարձ-րագույն կրթությունը կցվում է գործարաններին, ֆերմերային տնտեսություն-ներին և ձկնորսական կազմակերպություններին: Նման հաստատություններ-ից է Ավիացիայի և հեռագրության համալսարանը, որում ուսումը տևում է հինգ տարի:

Սակայն պետք է նշել, որ Հյուսիսային Կորեայում ապագա մասնագի-տությունն ընտրելու իրավունքը սահմանափակ է և կառավարությունն է ու-սանողներին ուղղորդում ընտրության հարցում[43]: Սա պայմանավորված է

39 Տե՛ս North Korea: A Country Study, edited by Savada A. M., Washington, 1994, էջ 93:

40 Education Encyclopedia, North Korea: Educational System-overview, https://education.stateuniversity.com/pages/1113/North-Korea-EDUCATIONAL-SYSTEM-OVERVIEW.html (մուտք՝ 14.06.2023):

41 Տե՛ս Kim Il Sung University, http://www.ryongnamsan.edu.kp/univ/ko/index 07.09.2023.

42 Տե՛ս EduRank, Kim Il Sung University Rankings, https://edurank.org/uni/kim-il-sung-university/ (մուտք՝ 12.06.2023):

43 Տե՛ս 주체사상과 북한경제 (Ջուչեի գաղափարախոսությունը և Հյուսիսային Կորեայի տնտեսությունը),

հիմնականում տնտեսության, քաղաքականության, անվտանգության գործոն-ներով: Պետությունը խստորեն վերահսկում է ռեսուրսների բաշխումը, արտադրության թիրախների սահմանումը և որոշում, թե որ ճյուղերն են ստանում առաջնահերթություն: Նման համակարգում պետությունը հաճախ անհատներին ուղղորդում է մասնագիտությունների, որոնք համահունչ են իր տնտեսական ծրագրերին: Այսինքն՝ կառավարությունը վերահսկում է աշխատուժի բաշխումը և՝ որ աշխատուժը համապատասխանի պետության տնտեսական և քաղաքական նպատակներին:

Բացի այդ, Հյուսիսային Կորեայի տնտեսական հնարավորությունները սահմանափակ են մեկուսացվածության ու վերահսկողության պատճառով: Աշխատանքի տարբերակների բացակայությունն ավելի է սահմանափակում ազատորեն մասնագիտություն ընտրելու հնարավորությունը: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ վերահսկվում կամ սահմանափակվում են այն մասնագիտությունները, որոնք կարող են ներառել «զգայուն» տեղեկատվության հասանելիություն, օտարերկրացիների հետ շփում:

Հետագա կարիերայում առաջխաղացում կարող են ունենալ նրանք, ովքեր հավատարիմ են եղել պետությանն ու նրա գաղափարախոսությանը: Այդ հարցում նշանակալի կարող է լինել նաև Սոնբունը (성분–Songbun)՝ սոցիալական կարգը: Սոնբունը Հյուսիսային Կորեայի սոցիալական դասակարգման համակարգ է, որը դասակարգում է անհատներին և ընտանիքներին՝ ելնելով պետության նկատմամբ ցուցաբերած նրանց հավատարմությունից[44]: Սոնբունը կարևոր գործոն է կրթության, աշխատանքի և այլ հնարավորությունների հասանելիությունը որոշելու համար: Նրանք, ովքեր ունեն Սոնբունի բարենպաստ դասակարգում, ունեն ավելի լայն հնարավորություններ, այդ թվում՝ կրթության բնագավառում, մինչդեռ մյուսները կարող են բախվել սահմանափակումների[45]:

Այնուամենայնիվ, հենվելով սահմանափակ տեղեկատվության վրա, կարող ենք ասել, որ Հյուսիսային Կորեայում խրախուսվում են մասնագիտությունները հետևյալ ոլորտներում՝ ներքին անվտանգություն ու պաշտպանություն, գիտություն, կրթություն, առողջապահություն, ճարտարագիտություն, գյուղատնտեսություն, արտադրություն, իսկ դիվանագիտության կամ օտարերկրացիների հետ առնչվող ոլորտները, ինչպես արդեն նշվել է, սահմանափակված են:

---

https://blog.naver.com/PostView.nhn?blogId=gounikorea&logNo=220934245575 (մուտք՝ 10.11.2023):

44 Տե՛ս NK News, Songbun and the five castes of North Korea, F. Tertitskiy, https://www.nknews.org/2015/02/songbun-and-the-five-castes-of-north-korea/ (մուտք՝ 13.11.2023):

45 Տե՛ս Freedom House, Freedom in the World 2022: North Korea, https://freedomhouse.org/country/north-korea/freedom-world/2022 (մուտք՝ 11.11.2023):

Կարելի է ասել, որ Հյուսիսային Կորեայի կրթական ծրագրերը չեն համապատասխանում Արևմուտքում ընդունված տարբերակին: Այստեղ կրթական ծրագրերը զուրկ են քննադատական մտածողությունից և չեն կարող նպաստել մարդու ստեղծագործական մտքի զարգացմանը: Սրանք ավելի են սահմանափակում կրթական համակարգի բուն կրթական գործառույթները:

Եզրակացություններ

Այսպիսով՝ կրթությունն այն հիմնական միջոցն է, որով հասարակությունն իր մշակութային արժեքները, ավանդույթներն ու ժառանգությունը փոխանցում է նոր սերնդին: Կրթությունը նաև հնարավորություն է տալիս քննադատաբար ուսումնասիրել և ծանոթանալ երկրի պատմությանն ու արժեքներին՝ հանգեցնելով ազգային ինքնության ավելի խոր ըմբռնմանը: Որոշ դեպքերում կրթությունը կարող է օգտագործվել ազգային ինքնության բացառիկ կամ պետության կողմից նախընտրելի տարբերակն ամրապնդելու համար: Իսկ Կորեական թերակղզում, որտեղ պատմությունը, մշակույթն ու ինքնությունը բաժանված են, կրթական համակարգը հանդես է գալիս որպես վերամիավորման և ընդհանուր ինքնության ձևավորման գործոն:

Հարավային և Հյուսիսային Կորեայի ինքնությունները ձևավորվել են յուրահատուկ պատմական փորձառությունների, քաղաքական գաղափարախոսությունների և մշակութային ժառանգության հիման վրա: Թեև երկու Կորեաներն էլ ունեն ընդհանուր էթնիկ և լեզվական ծագում, նրանց կրթական համակարգերը վճռորոշ դեր են խաղում քաղաքական գաղափարախոսությունների և նորմատիվների ամրապնդման գործում, որոնք, իրենց հերթին, ազդում են ազգային ինքնության ու վերջինիս մասին ընկալումների ձևավորման վրա: Կարող ենք ասել, որ երկու պետությունների կրթական համակարգերի հիմնական տարբերությունները կրթության նպատակներն ու գաղափարական սկզբունքներն են: Այս տարբերությունները միահյուսված են Հարավի և Հյուսիսի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում:

Հարավային Կորեայի կրթական համակարգը նպատակաուղղված է ժողովրդավարական սկզբունքների ամրապնդմանը: Այստեղ կրթությունը դարձել է երկրի արագ արդիականացման ու տնտեսական զարգացման շարժիչ ուժը՝ ի հայտ բերելով արդիականացված և մրցունակ հասարակություն: Հարավային Կորեայի կրթությունը շեշտը դնում է նորարարական կրթության, ակադեմիական առաջընթացի վրա և հաճախ կապված է ինտենսիվ մրցակցության հետ: Պետությունը նաև ապահովում է կրթական հավասար հնարավորություններ բոլոր քաղաքացիների համար:

Եվ հակառակը. Հյուսիսային Կորեայում կրթությունը խստորեն վերահսկվում և ծառայում է պետական ռեժիմի շահերին, գաղափարական ին-

դոկտրինացիային՝ ստեղծելով փակ հասարակություն: Հյուսիսային Կորեայի կրթական համակարգը սահմանափակում է արտաքին ազդեցությունը և խթանում հավաքական ինքնության ձևավորումը, որը կենտրոնացած է պետության և նրա առաջնորդների հանդեպ հավատարմության վրա: Բացի այդ, ուսումնական ծրագրերը զուրկ են այն բաղադրիչներից, որոնք այժմ պարտադիր են արևմտյան կրթական համակարգում, նաև պարունակում են տարրեր, որոնք անհամատեղելի են միջազգային համակարգի հետ:

Կորեական կրթական համակարգերը զգալի ազդեցություն ունեն Կորեայի վերամիավորման հեռանկարի վրա և ձևավորում են հասարակության համոզմունքներն ու արժեքները: Երկու Կորեաների գաղափարական տարբերությունները կարող են ձևավորել տարբեր պատկերացումներ վերամիավորված Կորեայի մասին: Վերամիավորման ճանապարհին անհրաժեշտություն կդառնա տասնամյակների ընթացքում ձևավորված տարբերությունների վերացումն ու ընդհանուր ինքնության ու արժեքների զարգացումը:

Չնայած այս տարբեր մոտեցումներին, Հարավային և Հյուսիսային Կորեայում կրթությունը մնում է որպես ազգային ինքնության ձևակերպման կարևոր գործիք: Քանի որ Կորեական թերակղզում շարունակվում են վերամիավորմանն ուղղված ջանքերը, հետևաբար կրթության դերը միասնական ինքնության ձևավորման գործում, անկասկած, կարևորագույն ասպեկտներից մեկը կլինի, ինչը պետք է դիտարկել ապագա զարգացումների համատեքստում:

Անանա Ջ. Տոմեյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Կորեայի պատմության նորագույն շրջանի հիմնահարցերը, մասնավորապես՝ Կորեայի վերամիավորման, միջկորեական հարաբերությունների, կորեական երկու հասարակությունների ու ազգային ինքնության վերաձևավորման հիմնահարցերը:

Էլ. հասցե՝ anna.tomeyan@ysu.am

Summary

KOREAN TWO EDUCATION SYSTEM

On the path to forming National identity

Anna J. Tomeyan

Key words: South Korea, North Korea, Korean reunification, national identity, Juche ideology, cultural heritage, Confucian values, education system, Korean school and university systems, educational disparities, collective identity, cross-cultural perspectives.

Despite sharing a cultural heritage and history, political and ideological differences between the two parts of the same nation on the Korean Peninsula have led to the creation of unique identities.

The article emphasizes the important role of education in creation of a single identity and the reunification of Korea. Because we can consider understanding the characteristics of national identity and the role of education as the key to the reunification of the Korean nation. Education servs as a primary means of transmitting cultural values and shaping national identity. In the Korean context, the education systems reflect the two states' unique historical experiences, political ideologies, and cultural heritage.

South Korea's education systems emphasize the development of national identity, equality, and responsibility. The South Korean education system began to develop from 1945 and faced challenges in the early stages but later developed it a modern education system with equal educational opportunities. Despite stress and competition, South Korean education aims to produce democratic, creative and integrated into the global community citizens.

North Korean identity is intertwined to state ideology, particularly the principles of Juche. Like all spheres of life, the education system is also strictly controlled by the state. North Korean education emphasizes self-reliance and loyalty to leaders. Political ideologies, the closed society play a central role in shaping collective identity. At the same time, it preserves cultural identity through strict controlled language and appearance.

The differences in educational goals and principles contribute to the divergence in beliefs and values between the two Koreas. South Korea's emphasized democracy, innovation, and academic progress are in contrast with North Korea's controlled education system, which is focused on loyalty to the state. These differences

Հասարակական գիտություններ, ԵՊՀ (ԵՊՀ) տարի, թիվ 1 (85), հունվար-մարտ, 2024

in education systems can have a significant impact on the Korean reunification on process, which will require overcoming political and ideological obstacles and creating a common identity.

Резюме

ДВЕ КОРЕЙСКИЕ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ
На пути формирования национальной идентичности

Анна Дж. Томеян

Ключевые слова – Южная Корея, Северная Корея, воссоединение Кореи, национальная идентичность, идеология Чучхе, культурное наследие, конфуцианские ценности, система образования, корейские школьные и университетские системы, образовательное неравенство, коллективная идентичность, межкультурные перспективы.

Несмотря на общее культурное наследие и историю, политические и идеологические различия между двумя частями одной нации на Корейском полуострове привели к созданию двух уникальных идентичностей.

В статье подчеркивается важная роль образования в создании единой идентичности и воссоединении Кореи, т.к. признание особенностей национальной идентичности и важной роли образования можно рассматривать как ключ к воссоединению корейской нации. В корейской системе образования отражаются уникальный исторический опыт, политическая идеология и культурное наследие двух государств.

Для системы образования Южной Кореи важно признание национальной идентичности, равенства и ответственности. Южнокорейская система образования начала развиваться с 1945 г., на раннем этапе столкнулась с определенными проблемами, но позже в стране была разработана система образования с равными образовательными возможностями. Несмотря на вызовы и конкуренцию, южнокорейское образование направлено на воспитание демократичных, творческих граждан, интегрированных в мировое сообщество.

Национальная идентичность Северной Кореи переплетается с принципами государственной идеологии Чучхе. Как и все сферы жизни, система образования строго контролируется государством. Северокорейское образование ориентировано на самостоятельное и лояльное отношение к лидерам. Государственная политическая идеология, закрытость общества играют центральную роль

в формировании коллективной идентичности. В то же время сохраняется культурная идентичность посредством строгого контроля над языком и внешним видом.

Образовательные цели и принципы в эти двух системах определяют различия в их убеждениях и ценностях. Южная Корея подчеркивает демократию инновации и академический прогресс, которые противоречат принципам контролируемой системы образования Северной Кореи, ориентированной на верность государству. Эти различия в системах образования могут оказать существенное влияние на процесс воссоединения Южной и Северной Кореи, т.к. потребуется преодоление политических и идеологических противоречий и создание общей идентичности.

Օգտագործված գրականություն

1. **Ким Г. Н.,** Республика Корея, Алматы, Дайк-Пресс, 2010.
2. **Пак Х. С.**, **Толстокулаков И. А.**, Трансформация системы образования Республики Корея и КНДР в послевоенный период, Россия и АТР, 2005, № 4, с. 73-77.
3. **Толстокулаков И. А.,** Очерк истории корейской культуры, Владивосток, Издательство Дальневосточнего университета, 2002.
4. **Aho E., Pitkänen K., Sahlberg P.**, Policy Development and Reform Principles of Basic and Secondary Education in Finland since 1968; Washington, The World Bank, 2006.
5. **Boo D., Lee D.**, Divided Korean Families: Why Does It Take So Long to Remedy the Unhealed Wounds? Korea Journal of Population and Development, Vol. 21, No. 2, December 1992, pp. 145-174.
6. **Byun J. I., Lee G. A. et al**, 2011 Modularization of Korea's Development Experience. Development Process and Outcomes of Adult Literacy Education in Korea, Seoul, Korea Development Institute, 2012.
7. **Choe-Wall Y. H.**, **Pettid M. J. et al**, Encyclopaedia of Korea, Australian National University, 1999.
8. Country meters, Население Северной Кореи, https://countrymeters.info/ru/Democratic_People's_Republic_of_Korea (մուտք՝ 22.05.2023).
9. Education Encyclopedia, North Korea: Educational System-overview, https://education.stateuniversity.com/pages/1113/North-Korea-EDUCATIONAL-SYSTEM-OVERVIEW.html (մուտք՝ 14.06.2023).
10. Education, the driving force for the development of Korea. Land of the morning calm develops into a prominent player in the global economy, London, Ministry of Education, 2015.
11. EduRank, Kim Il Sung University Rankings, https://edurank.org/uni/kim-il-sung-university/ (մուտք՝ 12.06.2023).
12. Freedom House, Freedom in the World 2022: North Korea, https://freedomhouse.org/country/north-korea/freedom-world/2022 (մուտք՝ 11.11.2023).
13. **Hoare J. E.**, Historical Dictionary of the Democratic People's Republic of Korea, The Scarecrow Press, UK, 2012.
14. **Hwan K. M.**, A History of Korea: An Episodic Narrative, New York, Palgrave Macmillan, 2010.

15. International Olympic Committee, Factsheet on the "North and South Korean Olympic Participation Meeting", https://olympics.com/ioc/news/factsheet-on-the-north-and-south-korean-olympic-participation-meeting (մուտք՝ 06.12.2023).
16. **Jeong M. R.**, **Lee W. J.**, Korean Education: Educational Thought, Systems and Content, Understanding Korea Series No. 9, The Academy of Korean Studies, 2018.
17. KBS World, Kim Jong-un Stresses Computer and Military Education, http://world.kbs.co.kr/service/news_view.htm?lang=e&Seq_Code=93843 (մուտք՝ 09.06.2023).
18. KICE, College Scholastic Ability Test, https://www.kice.re.kr/sub/info.do?m=0205&s=english (մուտք՝ 21.11.2023).
19. **Kim E. G.**, **Han Y. K.**, Attracting, Developing and Retaining Effective Teachers: Background Report for Korea, Seoul, Korean Educational Development Institute, 2002.
20. **Kim H. J.**, National Identity in Korean Curriculum; Canadian Social Studies, Vol. 38, N. 3, Spring 2004.
21. Kim Il Sung University, http://www.ryongnamsan.edu.kp/univ/ko/index 07.09.2023.
22. **Mehisto P.**, **Kitsing M.**, Estonia: co-constructing the future we need now, Tartu, Ministry of Education and Research, 2021.
23. Ministry of Education and Culture of Finland, Finnish Education System, https://okm.fi/en/education-system, 20.09.2023.
24. Ministry of Education, Education System in Korea, https://english.moe.go.kr/sub/infoRenewal.do?m=0301&page=0301&s=english, (մուտք՝ 25.09.2023).
25. Ministry of Education, Pre-Primary Education, https://english.moe.go.kr/sub/infoRenewal.do?m=0304&page=0304&s=english, (մուտք՝ 26.09.2023).
26. Ministry of Education Singapore, https://www.moe.gov.sg/ (մուտք՝ 07.12.2023).
27. NK News, Songbun and the five castes of North Korea, F. Tertitskiy, https://www.nknews.org/2015/02/songbun-and-the-five-castes-of-north-korea/ (մուտք՝ 13.11.2023).
28. North Korea: A Country Study, edited by **Savada A. M.**, Washington, 1994.
29. OECD, Education Policy Outlook in Estonia, OECD Education Policy Perspectives, No. 13, Paris, OECD Publishing, 2020.
30. **Park H. S.**, North Korea: The Politics of Unconventional Wisdom, London, Lynne Rienner Publisher, 2002.
31. Reliefweb, UNICEF EAPRO Education COVID-19 Response Update–September, https://reliefweb.int/report/world/unicef-eapro-education-covid-19-response-update-september (մուտք՝ 10.06.2023).
32. **Seth M. J.**, A History of Korea: From Antiquity to the Present, Lanham, Rowman & Littlefield Publishers, 2011.
33. **Spezza G.**, Education and Development in North Korea: The Push for a "Science-Based Economy" Under Kim Jong Un, Issue Brief, February 11, 2021.
34. The School Curriculum of the Republic of Korea; Ministry of Education, Science and Technology, Korea, 2008.
35. Understanding the 2019 Revised Nuri Curriculum, KICCE Policy Brief, Issue 14, Korea Institute of Child Care and Education, December 2019.

36. 2023 년 주요업무 추진계획. 교육개혁, 대한민국 재도약의 시작; 교육부, 2023 (2023 թվականի խոշոր բիզնեսի իրականացման ծրագիր: Կրթական բարեփոխումներ, Կորեայի առաջընթացի սկիզբ, Կրթության նախարարություն, 2023).
37. 단군, 우리 민족의 시조 (Տանգուն, Մեր ժողովրդի նախահայրը), http://contents.history.go.kr/mobile/kc/view.do?levelId=kc_n100800&code=kc_age_10 (մուտք՝ 05.12.2023).
38. **손영찬 외 4 인**, 고등학교, 사회·문화, 서울, (주)미래엔, 2020 (**Սոն Յոն Չան և ուրիշներ**, Միջին դպրոց, Հասարակություն. Մշակույթ, Սեուլ, Mirae N), https://ebook.mirae-n.com/@kb2102/cover (մուտք՝ 23.09.2023).
39. **정창우 외 12 인**, 고등학교, 인문학적 감성과 도덕적 상상력, 서울, (주)미래엔, 2019 (**Ջոն Չան Ու և ուրիշներ**, Ավագ դպրոց, Մարդասիրական զգայունություն և բարոյական երևակայություն, Սեուլ, Mirae N, 2019), https://ebook.mirae-n.com/@kb2115/cover (մուտք՝ 22.09.2023).
40. **정창우 외 12 인**, 중학교, 도덕 2, 서울, (주)미래엔, 2020 (**Ջոն Չանգ Ու և ուրիշներ**, Միջին դպրոց, Բարոյագիտություն 2, Սեուլ, Mirae N, 2020), https://ebook.mirae-n.com/@kb2062/cover (մուտք՝ 22.09.2023).
41. 주체사상과 북한경제 (Ջուչեի գաղափարախոսությունը և Հյուսիսային Կորեայի տնտեսությունը), https://blog.naver.com/PostView.nhn?blogId=gounikorea&logNo=220934245575 (մուտք՝ 10.11.2023).
42. 춘향전 (고전소설), 서울, 유페이퍼, 2015 (Չունիյան (Դասական վեպ), Սեուլ, U-Paper, 2015).
43. **윤종진**, 김정일 등장 이후의 '정치사상교양' 정책의 변화 분석; '통일정책연구' 13 권 2 호, 2004, 191~212 쪽 (**Յուն Ջոն Ջին**, Կիմ Չեն Իրի «քաղաքական գաղափարական կրթության» քաղաքականության վերափոխման վերլուծություն, «Միավորման քաղաքականության ուսումնասիրություն», հատ. 13, N 2, էջ 191–212).

REFERENCES

1. 2023nyeon juyoeommu chujingyehoek. Gyoyukgaehyeok, Daehanminguk jaedoyagui sijak; Gyoyukbu, 2023 **(In Korean)**.
2. Chunhyangjeon (Gojeonsoseol), Seoul, Yupeipeo, 2015 **(In Korean).**
3. Dangun, Uri minjogui sijo, http://contents.history.go.kr/mobile/kc/view.do?levelId=kc_n100800&code=kc_age_10 **(In Korean)**.
4. **Jeong Changu oe 12in**, Godeunghakgyo, Inmunhakjeong gamseonggua do deokjeong sangsangnyeok, Seoul, (ju)Miraeen, 2019, https://ebook.mirae-n.com/@kb2115/cover **(In Korean)**.
5. **Jeong Changu oe 12in**, Junghakgyo, Dodeong 2, Seoul, (ju)Miraeen, 2020, https://ebook.mirae-n.com/@kb2062/cover **(In Korean)**.
6. Juchesasanggua bukangyeongje, https://blog.naver.com/PostView.nhn?blogId=gounikorea&logNo=220934245575

(In Korean).
7. **Kim G. N.**, Respublika Korea, Almaty', Dajk-Prjess, 2010 **(In Russian)**.
8. **Pak X. S., Tolstokulakov I. A.**, Transformatsya sistemě obrazovanya Rjespubliki Korjeja i KNDR v posljevojennyj period, Rossija i ATR, 2005, №4, str. 73-77 **(In Russian)**.
9. **Son Yeongchan oe 4in**, Goedeunghakgyo, Sahoe Munhwa, Seoul, (ju)Miraeen, 2020, https://ebook.mirae-n.com/@kb2102/cover **(In Korean)**.
10. **Tolstokulakov I. A.**, Ocherk istorii koreyskoy kul'turě, Vladivastok, Izdatel'stvo Dal'nevostochnego universiteta, 2002 **(In Russian)**.
11. **Yun Jongjin**, Gim Jeongil deungjang ihuui 'jengchisa sanggyoyang' jeongchaegui byeonhua bunseok; 'Tongiljeongchaegyeongu 13guon 2ho, 2004, 191~212 jjok **(In Korean)**.